

Կ. ՍԵԼԵՋՆՈՎ

1812 թ. ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

ՈՒՍՈՒՑԻՋՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ

1937

9(47) 677

U-36 UG-4 June
18/2

1812 р. 4. 1812 р. 4. 1812 р. 4.

of Success

Հ. Խ. Ս. Հ. ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 14

ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 14

2047.15

4-36

Կ. ՍԵԼԵԶՆՅՈՎ

1937 թ. 10 10 1937 թ.

A II
32614

1195507

1812 ԹՎԱԿԱՆԻ
ՊԱՏԵՐՍԶՄԻ ՄԱՍԻՆ

Թարգմ. Ս. ՀԱՄԼԵԱՆ



ՌԻՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937

Խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈՅԱՆ
Սրբագրիչ՝ ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ

Գլավիթ Կ—4481

հրատ. № 2

պատմ. № 4

տիրած 1000

Հանձնված և արտադրության 2 հունվարի 1937 թ.

Մտրագրված և տպելու 13 հունվարի 1937 թ

Ուսուցիչների վերահսկման խնամուածի տպարան,
Յերեան, Մարքսի փողոց 17

1812 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

1812 թվականին Նապոլեոնյան բանակի պարտության պատճառներին վերաբերող հարցն անցյալ հարյուրամյակի սկզբում տեղի ունեցած Ֆրանսոսական պատերազմի պատմությունն ուսումնասիրելու ժամանակ հանդիսանում է վորպես հիմնական խնդիր: Խնչո՞ւ այնպիսի մի փայլուն բանակ, ինչպիսին էր Յեվրոպայի «մեծ բանակը», վորին գլխավորում էր մի այնպիսի հանճարեղ զորավար, ինչպես Նապոլեոնը, ամենամանր պարտություն կրեց, յերբ ընդհարվեց հետամնաց, ճորտատիրական Ռուսաստանի հետ, — այս հարցին առաջին հերթին պարտավոր են պատասխանել ԽՍՀՄ-ի պատմաբանները:

Մինչդեռ, ինչպես արդեն նշվել է մեր մամուլի եջերում, վոչ պրոֆ. Վանագի բրիգադի կողմից միջնակարգ դպրոցների համար գրված ԽՍՀՄ-ի պատմության դասագրքի նախագծի մեջ, վոչ էլ պրոֆ. Պրոնսկովսկու «ԽՍՀՄ-ի 19 և 20-րդ դ. դ. պատմության ուղագծեր»-ում այս հարցին պատասխան չի տրվում: Այս հարցը մինչև իսկ հեղինակների կողմից չի ել դրվում, թեպետ և 1812 թվականի պատերազմի մասին մարքսիզմի-լենինիզմի կրթիկների արտահայտած մտքերը և Նապոլեոնի արշավանքները կոնկրետ պատմությունից առած փաստերը դրա պատասխանի համար միանգամայն զոհացուցիչ նյութ են տալիս:

1812 թվականի պատերազմի ժամանակ Նապոլեոնյան բանակի պարտության պատճառները նախ և առաջ դաժվում են այդ արշավանքի իր իսկ բնույթի մեջ: Յեղել է ժամանակ, յերբ Ֆրանսիան հեղափոխական պատերազմներ եր մղում: 1792—1793 թվականների բուրժուական հեղափոխության դարաշրջանում հեղափոխական Ֆրանսիան պաշտպանվում էր սեակցիոն Յեվրոպայից:

Այն ժամանակ «ամբողջ ժողովուրդը և հատկապես մասնա-
հերը, այսինքն՝ կեղև քված դասակարգերը հեղափոխական ան-
սահման խանդավառութեամբ ելին համակելով: Ամեն քնքի պա-
տերազմը համարում էին արդարացի, պաշտպանողական, և նա-
խը քվոր այդպիսին եր»*)։ Սակայն տերմիդորականների հաղ-
թությունից հետո այն պատերազմները, վորոնք Նապոլեոնի
կոնսուլութեան և կայսրութեան տարիներում մղում էր Ֆրանսի-
ան, վերածում են իրենց բնույթի և պաշտպանողականից դառ-
նում են նվաճողական։ Լենինը Նապոլեոնյան պատերազմներն
ուղղակի անվանում է «խմբերիալիստական», հենց այստեղ իսկ
պարզաբանելով, վոր իմպերիալիզմի անվան տակ հարկավոր է,
տվյալ դեպքում, հասկանալ «ընդհանրապես այլ յերկրների կո-
ղոստում»-ը, իսկ իմպերիալիստական պատերազմի անվան տակ՝
«գիշատիչների պատերազմը—այդ ավարը բաժանելու համար»**)։

Լենինը գրել է. «Նապոլեոնի իմպերիալիստական պատե-
րազմները տեղեկն շատ տարիներ, ընդդիմեցին ամբողջ դարա-
շրջան, ցույց տվին իմպերիալիստական հարաբերութեանների՝
աղղային-ազատագրական շարժումների հետ միահյուսվող չա-
փազանց բարդ ցանցը»***)։

Պատմաբանների խնդիրն էլ հենց նրանումն է կայանում,
վորպեսզի ցույց տան այդ «արտասովոր բարդ ցանցը»։

Նապոլեոնի պատերազմների նվաճողական բնույթ կրելուն
վերաբերող միտքը Լենինի կողմից բազմիցս արծարծվում է։
Տիլզիտի հաշտութեան****) մասին նա ասում էր, թե այդ մի հաշ-
տություն է, վոր «աշխարհակալ Նապոլեոնը փաթաթեց ուսա-
կան և զերմանական ժողովուրդների վզին՝ նրանց մի շարք
ամենաձանր պարտութեանների մատնելուց հետո»*****)։

Մոսկվայի վրա արշավելու նախորդակին, Նապոլեոնի ունե-
ցած նվաճողական պլանների մասին, մենք ունենք նաև նրա

*) Լենին. — հատոր 21, էջ 190.

**) Լենին. — հատոր 22, էջ 287 (ռուսական հրատ.)

***) Լենին. — հատոր 22, էջ 287 (ռուսական հրատ.)

****) Տիլզիտի հաշտությունը կնքված էր 1807 թվականին, մի կողմից՝
Ֆրանսիայի և, մյուս կողմից՝ Ռուսաստանի ու Պրուսիայի դաշնակցութեան
միջև՝ Նապոլեոն 1-ի կողմից Պրուսիան պատերազմական ավերման յենթար-
կելուց հետո

*****) Լենին. — հատոր 22, էջ 395.

սեփական արտահայտութիւնները: Այսպէս. 1811 թվականին
Լեհաստանի իր լիազոր-ներկայացուցիչ Բինյոնին ուղղված հրա-
հանգի մեջ նա գրում էր.

«Կայսրութիւնն այժմ վերապրում է իր հզորութեան ծաղ-
կումը: Յեթն նա այժմ հեթ չստեղծի Յեվրոպայի քաղաքական
կերպովածքը, վտղը նա կարող է զրկվել այժմյան դրութեան
վողջ ոգուտներէց և կորցնել իր ձեռնարկումները իրազործելու
հնարավորութիւնը»^{*)}: 1811 թվականի գարնանը Նապոլեոնն իր
ձառերից մեկում մերկացնում է նաև այդ «ձեռնարկումները»
կոնկրետ բովանդակութեամբ: «Աշխատում են իմանալ, թե Քեր
հնք գնում մենք,— ասում էր Նապոլեոնը:— Մենք կվերջացնենք
Յեվրոպայի հետ, իսկ այնտեղ, ինչպես ուժեղագույն ավազակը
հարձակվում է ավելի յերկշտի վրա, կտիրապետենք Հնդկաս-
տանը... Յերեք տարի ևս — ու յես կլինեմ տիեզերքի վեհա-
պետը»^{**)}:

Այսպիսով մեր առաջ վիթխարի նվաճումների բացահայտ
ծրագիրն է: Նապոլեոնը յենթագրում էր հասնել այդ ծրագրի
հաջող իրագործմանն իր բանակի ոգնութեամբ, վորն, իսկապես՝
իր հոծութեամբ, դյուրաշարժութեամբ, հազմական արվեստով ու
մարտական փորձառութեամբ գերազանցում էր ժամանակակից
բոլոր բանակները: Ըստ Ենգելսի արտահայտութեան, Նապոլեո-
նի բանակը վազմված էր «ազատագրված մանր գյուղացիներից
ու քաղաքային մաշված ամբոխից»^{***)}:

Սակայն նա արդեն հեղափոխութեան հայրենա-
սերներին բանակ չէր, նրա վազմի հեղափոխական տրագի-
ցիաները հողմահարվել ու չքացել էին: Իր ժամանակին նրանց
հիմքն էին կազմում «ամբողջ յերկրի անցումը, արագութեամբ,
վճռականութեամբ, յետանդով, հերավի հեղափոխական-զեմոկրա-
տական անձնվիրութեամբ,— զեպի արտագրութեան ավելի բարձր
յեղանակի, զեպի ազատ, գյուղացիական հողատիրութիւնը»^{****)}:

^{*)} Մեջբերում ըստ Պոգոլինի «Նապոլեոնը Լեհաստանում» հոդվածի
գեոեղգած «Հայրենական պատերազմն ու Ռուսական հասարակութիւնը»:
1812—1912 թ.թ.» ժողովածվում, հատոր 3, էջ 150. հորեկյանական հրատա-
րակութիւն, Մոսկվա, 1912:

^{**)} Մեջբերում ըստ Տրաչեվսկու «Նոր պատմութիւն»-էց հատոր 2, էջ
339. ՍԳԲ., 1908:

^{***)} Կ. Մարքս և Ֆ. Ենգելս Յերկրի ժողովածու, հատոր 8, էջ 458.

^{****)} Լենին. — հատոր 21, էջ 189.

Հենց ինքը՝ Նապոլեոնը հաշիվ եր տալիս իրեն 1792—1793 թվականների ժամանակվանից ֆրանսիական բանակի այդ փոփոխված բնույթի մասին: 1812 թվականին նա ասում եր. «Իմ բանակն աշնպես և կազմված, վոր նրա լիովին կազմալուծման դեպքումն ել միայն շարժողությունը կպահպանի նրան: Նրա գլուխ անցած՝ կարելի չի առաջ ընթանալ, բայց վոչ կանգ առնել և վոչ ել նահանջել: Սա հարձակման բանակ և, վոչ թե պաշտպանման»): Վորպես այդ բանակի բնույթը ցուցադրող փայլուն վավերաթուղթ և իրենից ներկայացնում նապոլեոնյան բանակի մի յերիտասարդ ղեկավորի 1812 թվականին ղեպի հայրենիք գրած նրա նամակը—«Առաջ մենք կմտնենք Ռուսաստան,—գրել և այդ ղեկավորը,—վորտեղ մենք փոքր ինչ պիտի կռվենք, վորպեսզի մեզ համար անցք բանանք ղեպի ավելի հեռուն: Այլ, հայր, ապշեցուցիչ նախապատրաստություններ են տեղի ունենում պատերազմի համար: Հին ղեկավորներն ասում են, թե նրանք յերբեք վոչ մի նման բան չեն տեսել: Այդ ճշմարիտ և, քանի վոր վիթխարի ուժեր են հավաքվում: Մենք միայն չգիտենք, թե արդյոք այդ միայն Ռուսաստանի ղեմ և: Մեկն ասում և, վոր այդ ղեպի Մեծն Հնդկաստան արշավելու համար և, մյուսը, թե՛ ղեպի Յեզիպոս արշավելու համար, չգիտես արդյոք վմր մեկին հավատա: Ինձ համար այդ բոլորը միևնույնն և: Յես կուգենայի, վորպեսզի մենք մինչև աշխարհի հենց ծայրը հասնեյինք»**):

2

Նվաճողական այդ ծրագրերի իրականացման համար պատերազմական գործողությունների ընդհանուր պլանը Նապոլեոնի մոտ կազմվեց արդեն 1810 թվականի ամսանը: Նա նշեց յեռամյա արշավ, ուռաջին տարվանը—Սմոլենսկու գրավումն ու

*) Ս և գ ու բ. «Նապոլեոնի մեծ բանակի 1812 թ. պատմությունը», ծ-րդ, 1-ին, էջ 265: Քաղվում և ըստ Զիլեկեդովի «Ներքուծում: Նապոլեոնի պլանը» հոդվածի՝ տպված հիշ. հոբելյանական ժողովածվի 3-րդ հ., էջ 146:

**) Հոբելյանական ժողովածու, հատոր 3, էջ 48

Լինատաւանի վերականգնումը, յերկրորդին—Մոսկիւայի գրաւումը, և յերրորդին—Պետերբուրգին Այս պահներէ մասին Մետաերնիխին իրազեկ դարձնելով՝ նա տոմար էր, թե տառջին պահին կամենում է Սմոլենսկում ու Մինսկում կանգ առնել ու գրադելի Արաւայի կազմակերպումով, վորը «ծարավի չե թոթափելու իրենից սուսական լուծը»։ Նշված էր Ռուսաստանի մասնատման նախագիծը։ Նապոլեոնը ծրագրում էր իրեն Լեհաստանի թագաւոր հռչակել իսկ Իոսիֆ Պանյատովսկուն վարձատրել Սմոլենսկու իշխանութիւնով։ Կազակային մարզերից և Ուկրայնայից պետք էր ստեղծվէին ինքնուրույն թագաւորութիւն կամ թե Պրիվիլյան միութիւն (Ռեյնյան միութիւն նմանութեամբ)։

Նշված ծրագրի արդշունակեա իրադարձման համար Նապոլեոնը ձգտում է Ռուսաստանի ներսում դանկ մի աշխարհի ուժ, վորի վրա կարող լինել հիմնվել ցարական բանակի դեմ իր մղած պայքարի ընթացքում։ Նա հաշվի չէր առնում, վոր նման մի ուժ և հանդիսանում սուսական գյուղացիութիւնը։ Ուստի Նապոլեոնն առաջին պահին ստիպւած էր այդ նվաճողական պատերազմի իսկական նպատակները քողարկել ազատագրական լուղունգներով—«հեղափոխութեան տեսիլներով»։

Դեռևս 1808 թվականին նրա ծպտյալ գործակալը Ռուսաստանից նրան զեկուցում էր, վոր սուսական գյուղացիներն, իբր թե խիստ արամաղիր են անցնելու Փրանսիական հաղթական բանակի կողմը, վորովհետեւ նրանք «միայն ու միայն ազատութեան մասին են յերազում ու բաւական լավ են գիտակցել իրենց սարկութիւնը, վոր խիստ դաժան է»*)։ 1812 թվականի սեպտեմբերին Նապոլեոնը հարցում է անում իշխան Յեվդենի Բոգարնեյին, թե ի՞նչ տեսակի ղեկընտ ու պրոկլամացիա հարկաւ վոր կլինէր լաց թողնելու, վորպեսզի ապստամբութիւն առաջացվի Ռուսաստանում և այդպիսով իր կողմը գրավել գյուղացիներին։

Նապոլեոնի այդ դրտավորութիւնների կազակցութեամբ քրանախալում ուղղական կուսակցութեան որդան — «Ժուրնալ

*) Տարի և Նապոլեոն 1-ի լրտնոր 1808 թ. տուսց հասարակութեան մասին, «Մոլրեմանի միք» №12, 1910 թիվ, էջ 56։ Մեջբերում ցուտ հարկական ժողովածի, հատոր 5, էջ 78,

դ՝ Սմայիր»-ը հանգամանորեն փաստարկում էր հման աղտոտա-
բության հնարավորութիւնը, ի հայտ բերելով Ռուսաստանի
հերոսւմ ազգային թշնամանքի մոմենտները: ՀՀատկապէս ու-
սական կարող են համարվել միայն կենտրոնական 14 նահանգ-
ները, մնացածները... բնակեցված են Ռուսաստանին թշնամի ցե-
ղերով, վորոնք առաջին իսկ առիթին են սպասում, վորպեսզի
թոթափեն իրենցից ուսական լուծը: Թաթարները, Դոնի կա-
ղակները, վրացիներն անմիջապէս կապտամբեն, հենց վոր լը-
սեն, թե «արքայից արքան» բոցով բռնված իր մայրաքաղաքից
դեպի Վոլգա յն վախչում»*):

Սակայն գործնականում Նապոլեոնն ամենեւին չէր պատրաստ-
վում ճորտատիրական Ռուսաստանի դուռըացիներին ու հարըս-
տահարված ազգութիւններին աղատագրել: Տակալին 1809
թվականին նրա մինիստր դե Մոնտալբինն «կայսրութեան զը-
րութեան մասին հաշվետուութիւն»-ում հայտարարեց, թե կայսրը
վոչ մի բան չի փափագում, ինչ վոր կարող կլինէր անհան-
գստացնելու իր դաշնակից ուսաց կայսրին: Ալեքսանդր 1-նի
հետ իր ունեցած զրույցի ժամանակ Նապոլեոնը կտրականապիս
ժխտում էր դեպի լեհերի աղատամտութիւնը առած համակ-
բութեան առթիվ իրեն ուղղված կշտամբանքը: «Լեհաստանում
ինձ համբար ե պետք, այլ վոչ թե ֆորում (հրապարակ): Յեւ
մտաղիւր չեմ յակօրիններ բարմացնել և ստեղծել հանրապետա-
կան ոջախներ: Յեւ փափագում եմ լեհերին ունենալ միայն վոր-
պիս ոսղմական կարգապահութեան վարժված ուժ, վորպեսզի
պատերազմի դաշտը կահալորեմ»**):

Յեւ, իսկապէս, Նապոլեոնը լեհերին արված խոստումներից
և վոչ մեկը չկատարեց: Լեհաստանում դառնորեն զվարճախոսում
էին. «Գըսութիւնը վարչավեցան, դրամը պրուսական, բանակը
լեհական, թագավորը սաքսոնական, որենսգիրքը ֆրանսիական»:

Յերը Լեհաստանում Նապոլեոնի նախարար դե Պրադտու-
յին 1812 թվականի հուլիսի 29-ին նայելու համար ներկայաց-
վել և կոնֆերենցիայի մանիֆեստի տեքստը, նա դուրս ե հանել
նրա կենտրոնական մասը, վորի մեջ տալում էր. «Լիտվայի, Բե-
լոռուսիայի, Ուկրաինայի, Պոդոլիայի ու Վոլինիայի բնակիչները

*) Տրաշեվսկի. մեջբերում. յերկեր, հատոր 1, էջ 365

**) Նույն տեղում:

մեր յեղբայրներն են: Նրանք լեհեր են, ինչպես նաև մենք...» Նապոլեոնյան «ազդուծյունների գաղափարը» նվաճված Լեհաստանում լրջմիտ քննարկման չէր յենթարկվում: Լեհական ժողովրդի համար Նապոլեոնը չրերեց ազդային ազատագրութուն, ձկշտ աշնպես, ինչպես և Ռուսաստանի գյուղացիության համար սոցիալական ազատագրում:

Ֆրանսիայի պաշտոնական պատմաբաններն առատով էյին ստեղծել այն մասին, վոր Բոնապարտը հուսով էր, թե Ռուսաստան մանելով՝ աշնտեղ ժողովուրդը կգտնի իր շղթաները փշրելու պատրաստ, սակայն 1812 թվականի պատերազմի հետևանքները ցույց տվին, թե այդ հաշիվն ինչքան սխալական և յևղել: Բայց և՛ Նապոլեոնը, և՛ նրա մերձավորներն աբշավում էյին Ռուսաստան վոշ թե նրա համար, վորպեսզի ճորտատիրության կապանքները խորտակեն, այլ վորպեսզի այն (Ռուսաստանը) նվաճեն, մաս-մաս անեն և գաղութայնացնեն: Նրանք մերժեցին «գյուղացիների ազատագրության» նախադիժը, վորպես վտանգավոր ու չափազանց յերկյուղալի: Նապոլեոնը Մոսկվան գրավելուց հետո հաստատակամորեն ընդդժում էր, թե «Մոսկվան վոշ թե ոտդմական, այլ քաղաքական զիրք և, այստեղ յես զորավար չեմ, այլ իմպերատոր»*):

Արդեն պարտությունից և Փարիզ վերադառնալուց հետո (1812 թվականի դեկտեմբերի 20-ին) Նապոլեոնը սենատի առաջ դարգացնում էր այս միտքը. «Յես Ռուսաստանի դեմ մղում եմ միայն քաղաքական պատերազմ, —ասում էր նա: —Յես կարող էյի նրա դեմ զինել իր բնակչության մեծագույն մասը, ճորտերի ազատագրում հուշակելով. բաղմաթիվ գյուղերում այդ առթիվ ինձ խնդրում էյին: Սակայն յերբ յես տեսա ոռւս ժողովրդի այդ բաղմաքանակ դասակարգի կոպտացումը, յես հրաժարվեցի այդ միջոցից, վորը բաղմաթիվ ընտանիքներ կմատնեի մահվան ու ամենազարհուրելի տանջանքների»**):

Արդեն 1808 թվականին վերը հիշատակված Ռուսաստանի դործակալը Նապոլեոնին նախազգուշացնում էր, վոր գյուղացիական հարցում անհրաժեշտ և մեծ զգուշությամբ գործել, նույնիսկ

*) Տրաչևսկի, մեջբերում, յերկեր, էջ 370:

**) «Էե մոնիտոր ունիվերսալ» № 356, 1812 թվին: Մեջբերում ըստ Հոբել, ժողովածվի, հատոր 5, էջ 79:

Վարչապետի գրասենյակին մեջ, քանի վոր այնտեղ գյուղացիների ազատագրումը (առաջնայն հոդի— Կ. Ս.) և Նապոլեոնի որոնողքի գործադրումը կվախեցնեյին լիտվական նահանգների ազնվականութեանը: Նապոլեոնի գգուշավորութեանն այդ հարցում, առաջնայն գրութեան և, այնպիսի չափերի յեր հասնում, վոր տակաւին 1803 թվականին նա, որինակի համար, հաղորդում եր ուսական կառավարութեանը՝ գյուղացիների ազատագրութեան առթիւ, կոմս Մորկովի— ուսական գեապանը Փարիզում— «աներկբա լուրերի» մասին:

Յերը Ֆրանսիական բանակը զբաղեց Վիտեբսկը, շրջակայքի գյուղացիները կալանավորեցին իրենց տերերին ու կառավարիչներին և նրանց Ֆրանսիական հրամանատարի մոտ դատաստանի բերեցին: Սակայն դէներալ Շարպանտեն կալանավորվածներին ազատ արձակեց, գյուղացիներին դուրս վտնդեց և զինվորական պահպանութեան դրեց կալվածատիրական կայքերի վրա: Ֆրանսիական եկզեկուցիոն ջոկատը, վոր, տեղական կալվածատերերի պահանջի համաձայն, ուղարկված եր Մինսկի նահանգի Բարխովսկի գավառը, զինված ուժով ձնշեց 4 գյուղի գյուղացիների ազատամրութեանը: Միայն 1812 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում նահանգական դատարանը 25 գյուղացիների դործ ե քննել՝ կալվածատիրոջը չհազանդելու մեղադրանքով:

Սմոլենսկի նահանգում Ֆրանսիացիները բնակչութեան ուղղված պրոկլամացիա հրապարակեցին, վորի մեջ կալվածատերերին կոչ եյին անում չանհանգստանալ. «ներկայացեք և վրատահութեան ունեցեք դեպի մեր կառավարութեանը Դուք այս նահանգում հանգիստ կլինեք, վորում հավատաւացնում ե ձեզ Ֆրանսիական իմպերատորը, և կվերականգնի նախկին կարգը»^{*)}: Սակայն գյուղացիներին հաղորդվում եր, թե իմպերատորը «նրանցից ազատում և հպատակութեան և խոնարհութեան»: Ֆրանսիացիների կողմից նշանակված Լիտվայի ժամանակավոր կառավարութեան հանձնաժողովի կոչն ավելի հստակ եր արտահայտվում. գյուղացիները «պարտավոր են հնազանդել իրենց

^{*)} Ռուսական արխիւի, 1901 թիւ, դիրք 5, եջ 8, Հոբել, Ժող., հատոր 4
Կ2 130

կարլածատերերին, վոչնչով չխախտել տիրոջ սեփականությունը, կատարել աշխատանքներն ու պարհալը»^{*)}։ Վերջապես Վիլնայի նահանգում հոգևորականությանն առաջարկված էր հարկադրել գյուղացիներին անհապաղ վերսկսել կոռի՝ հարատև կտտաբուծը, նամանավանդ, վոր «1812 թվականի բերքը լիառատ եր»։

Այդպես ծխի նման քամուն տրվեցին «հեղափոխության տեսիլները», վորոնցով քողարկվում էր հափշտակողական պտտերազմը։

Նապոլեոնը ճանապարհ չմաքրեց նաև բարձրացող ոռոտական գործարանատիրոջ և առևտրականի համար։ Մինսկում, Բելաստոկում, Վիլնայում ու Գրոդնոյում տեղական բնակիչներից նշանակից նահանգական կոմիսարներ—ինքնավարության որդաններ։ Սմոլենսկում ու Մոսկվայում—քաղաքային մունիցիպալիտետներ և քաղաքային մերեր (քաղաքագլուխներ)։ Ինչ էլին ներկայացնում իրենցից այդ որդանները։ Լիտվական ժամանակավոր կառավարության մեջ ու մեծ իշխանի կոնգիայում չկար և վոչ մի առևտրական կամ քաղքենի։ Վիլնայում նահանգական հանձնաժողովի ամբողջ կազմում գտնվեց 3 առևտրական, 1 թամբագործ վարպետ ու 3 անձնավորություն էլ ազատ ըզբաղմունքի տեր մարդիկ (յերածիշտ, բժիշկ և զատապաշտպան)։ Մոսկվայի քաղաքական մունիցիպալիտետի 87 անդամներից կային 20 ֆրանսիական սեզիդենտ, 15 նախկին չինոմբիկ, 4 պաշտոնաթող սպա։ Սրանցից բացի, մունիցիպալիտետի մեջ էլին մտնում 15 առևտրական, 4 հոգի ազատ զբաղմունքի տեր անձնավորություններ և նույնիսկ 2 հոգի էլ իշխանատան սպասավոր ու մեկ անձ էլ ազատ ճորտ։ Սակայն համկանալի չե, վոր այդ մունիցիպալիտետը վոչ մի սեռի իշխանություն չուներ։ Իրա համար էլ զարմանալի չե, վոր Նապոլեոնի կողմից ձեռնարկված զինվորահավաքը ձախողեց (ամբողջ Վալինիան 2 զինվոր տվեց) և վոր մարշալ Դավուն զբաղված նահանգներում չգտավ «այն խանդավառությունը, վոր նա տեսել էր ուրիշ վայրերում»։

^{*)} Հոբելյանական ժողովածու, հատոր 5, էջ 88։

Յարիգմն ու կարվածատերերը հույս ունեյին զիմադրություն կազմակերպել Նապոլեոնին և հաղթել նրան Ռուսաստանի սահմաններից հորտատիրական պատերազմի միջոցներով, այսինքն՝ պատերազմել աշխուս, ինչպես նրանք պատերազմում էին, որինսկ, յոթնամյա պատերազմի տարիներում:

Յերբ Տիլզիտի տարիներին Ալեքսանդր 1-ի կողմից միլիցիա գումարելու վերաբերյալ մանիֆեստ հրատարակեց, ազնվականությունը տազնադաճար յեղով ու կառավարության ուշադրությունը հրավիրեց այն վառագների վրա, վորոնք կապված էին «պատահական տրամադրությունների, յենթակա անգուսպ, գոհնիկ գյուղական բնակչությանը սպառազինելու» հետ: Այդպիսի ազնվական բողոքարկողներից մեկը գրել է. «Յեթև առաջներում Դոնի անդրադետ կազակն ապստամբեցրեց ժողովուրդը և սառանցնում էր պետության հիմքերը, ապա այժմ խոտվարար, նախաձեռնող, գուցե և ավելի լուսավոր միտքը չի՞ զիմավորում արդյոք իր համար արդեն պատրաստակամ 600,000 մարդ»^{*)}:

Իր հերթին Ալեքսանդրը պատերազմը առաջին ամիսներում վճառականորեն մերժում էր մինչև անգամ ազնվականներին դրամով ու մարդկանցով ոժանդակելու վերաբերյալ կոչ անելու մասին յեղած առաջարկությունները, չցանկանալով պատերազմին ժողովրդակաճ անաք անգամ վերագրել: Յերբ նրա մոտ ստորագրության համար բերեցին մանիֆեստի նախագիծը, նա ջնջեց անքայտից հեռակալ խոսքերը ժողովրդի մասին. «Վորն իր մանկության շրջանում թափ ավեց տնտեսական հաղթանակողների լուծը, վորը խոտվությունների և անիշխանության միջավայրում իր անգուղական արևության միջոցներ գտավ այլացեղ հրոսակախմբերին հաղթելու համար»^{**)}:

Հասկանալի չէ, վոր պատահական չի աշխարհի դեմքերի յերևան գալը, ինչպես նապոլեոնն ու Բաղրատիոնը: Ռասսոյալինը պատերազմի հենց սկզբում գրել է Յերմոլովին. «հարձակվեցե՛ք: Աստված վկա՝ կոգե՛նչենք զորքերին և նրանց փա-

*) Մեջբերում ըստ Կուբանովի «1812 թ. աշխարհազորը» հոդվածի, հոբելյանական ժողովածու, հատոր 5, էջ 45:

**) Հորել. ժողովածու: հատոր 3 էջ 177:

փախներով կփախցնենք: Այլապես Լեհաստանում և մեզ մոտ հեղափոխություն կլինի»*)։ Իսկ մի ուրիշ գրության մեջ նա վախենում է. «Ռուսաստանում ղժվար և Պոժարսկու կեսն իսկ գտնել, ամբողջ հարյուրակներ կան, վորոնք պատրաստ են գլխալու Ռուբեսկերի ու Սանտերրի հետքերով»**)։

Արդեն պատերազմի առաջին որերում հայտաբերվեց, վոր պատերազմի հին ձևերը պարտություն են խոստանում: Ոգոստոսի 13-ին Բաղրատիոնը գրել է Ռաստոպչինսին. «Ի սեր աստծու, հարկավոր է զայրացնել ամբոխին, վոր իբր թե կողոպտում են յեկեղեցիները և առևանգում են իգական սեռը, այս և անհրաժեշտ պատմել մուփխիներին»***):

Ազնվականության այդ ամենից ավելի խեղացի ներկայացուցիչներն փորձերը՝ ժողովրդին «Փրանսիացու» գեմ վռտքի հանելու, հանդիպում էյին կառավարող դասակարգի անվճար կանությանն ու կարճատևությանը:

Կալվաժատերերն աղմուկից ողավելով առիթ էյին փնտրում աշխարհադուր ուղարկելու «վատթարագույն մարդկանց»։ Որինակ՝ կոմս Որլով-Դավիդոն, իր կալվածքի ղործակատարին հրամայել էր «հարբեցողներին, վատնողներին, հայրենական կալվածքի համար անկայուններին՝ յերբեք չխնայել»։ Իրենք՝ ազնվականներն իրենց հիվանդ էյին ձևացնում (գրիֆա, բղիոց, «ձեռքերի դողդողում» և այլն) ու խուսափում էյին ծառայությունից։ Պատերազմից հետո նրանք հաշվաչին անդորագրերի կատարյալ առևտուր ծավալեցին, վորոնք այդ ստացել էյին բանակ ուղարկած աշխարհադրականների զիմաց։ Դերասան Շչեպկինը հաղորդում է մի կալվաժատիրուհու հասարակության մեջ տեղի ունեցած բնորոշ խոսակցությունը. «Յերևակայեցեք, Իվան Վասիլևիչին ի՞նչ յերջանկություն է վիճակվել. նա աշխարհադուր էր տվել 9 մարդ, բայց վերադարձել է ընդամենը մեկը։ Այնպես վոր նա 8 նորակոչական անդորագիր ստացավ և բոլորն էլ վաճառեց՝ յուրաքանչյուրը յերբեք հազար ուրբով»։

*) Հրել. ժողովածու: հատոր 3, էջ 177:

**) Նույն տեղում. էջ 94:

***) Դուրբովին, «Հայրենական պատերազմը ժամանակակիցների նամակներում», էջ 98. մեջբերում բոտ Ռաժկովի: «Ռուսաց պատմությունից»: Ակնարկներ և հոդվածներ: հատոր 2, էջ 55, Պետերբուրգ 1923:

իսկ յես հանձնեցի 26 մարդ և, ի դժբախտություն ինձ, բոլորն ել վերադարձել են: Այսպես ել անբախտություն: Ամենքն ել համաձայնեցին կալվածատիրունու հետ, իսկ մի քանիսն ել ավելացրին. «Այո, այդպիսի բախտավորություն, ինչպիսին Իվան Վասիլևիչին և աստված տվել, քչերին և տրվում»*):

Այս բանակին զեմ-հանդիման կանգնած եր մեկ ուրիշ, ճիշտ ե՛ր սակավաթիվ բանակ—աղնվական յերիտասարդության, վորն աճել եր ենցիկյողեղիստների հանրապետական զաղափարները համակրելու և որենսդրական ժողովի մթնոլորտում և ատում եր բռնակալ, ժողովուրդներին ստրկացնող Նապոլեոնին: Այդ բանակից դուրս են գալիս ապագա ղեկաբերստները: Նրանք քիչ են, վորովհետև այն ժամանակ «պատմությունն ստեղծում եյին մի բուռն աղնվականներ ու մի կույտ բուրժուական ինտելիգենտներ՝ բանվորների ու գյուղացիների քնած մասսաների ներկայությամբ»**):

Դեկաբրիստները զժվարությամբ ընդունեցին և խորապես զգացին Տիլլիտի խայտառակությունը: Ստորացուցիչ հաշտությունը նրանց համար ազգային վերելքի, ազգային զգացմունքի աճման աղբյուր դարձավ: 1812 թվականի պատերազմն այդ զգացմունքին յեւր տվեց: Հետագա ղեկաբերստ՝ 16 ամյա Նիկիտա Մուրավյովը բանակ ընդունվեց վորպես կամավոր: Կամավորների շարքումն եյին Շահյանգելը, Բատյուշկովը: Լուսինը բանակ մտնելով, խնդրեց՝ իրեն ուղարկել Նապոլեոնի ռազմականա՜նը վորպես բանբեր, վորպեսզի կարողանա «նրա կողք դաշտն խրել», Գլինկան յերգ և գրում «Կապշուպանենք մեր պետությունը, լավ և մահը, քան թե ստրուկության մեջ ապրե՛լ»:

Այս միջավայրում մեծ ժողովրդականություն եր վայելում Նապոլեոնին հակադրվող Ռուսաստանի մոտիկությունը՝ իր անկախության համար Իսպանիայի զեմ պայքարող Նիգերլանդիայի հետ:

Գրիբաշեդովն իր մի անավարտ զրամայի ուրվագրում ծաղրում եր «ընդհանուր աշխարհագորն առանց աղնվականների»: Պուշկինը դառնությամբ ու ստրկազմով գրել եր այդ ժամանակ-

*) Մեկբերում բոս Կաբանովի «1812 թ. աշխարհագորը» հոդվածից: Հորել, Ժողովածու, հատոր 5, էջ 72:

**) Լեւին, հատոր 22, էջ 377—378:

վա մասին. «Երբորն սկսեցին աղաղակել Պոժարսկու և Միսինի մասին ու սկսեցին ժողովրդական պատերազմը քարոզել, պատ-
րաստվելով յերկար ժամանակով մեկնելու սարատովյան գյու-
ղերը»*):

Պատերազմը հիրավի ժողովրդականի վերածելու հայրենա-
սիրական շրջանների փորձերը խիստ զուսպ վերաբերմունքի
հանդիպեցին Ալեքսանդր 1-նի կառավարության կողմից. Ա. Ն.
Գլինկան 1812 թվականի հուլիսի 19-ին գրել յե առնում. «Մի-
միայն խոսում են ընդհանուր զորահավաքի մասին, ընդհանուր
ապստամբության մասին... Սակայն ժողովրդական պատերազմը
բավական նոր է մեզ համար: Թվում է թե տակավին յերկյուղ
են կրում ձեռքերն արձակելը»**):

Համաժողովրդական վերելքի իսկական աղղանշան ծառայեց
Մոսկվայի հրդեհը,—մի անցք, վորը ժողովրդական գիտակցու-
թյան մեջ խորը հետք թողեց:

Նշանակալից է այն, վոր յերբ պատերազմը ժողովրդական
դարձավ, նա պարտիզանական կռիվների կերպարանք ընդունեց:
Սովորաբար խոսում եյին ու գրում Դենիս Դավիդովի, Ֆիգների
Ջոկատների և սրանց նման սպայական Ջոկատների մասին, մատ-
նանշելով, վոր նրանց ոժանդակեցին կամավոր գյուղացիները,
վորոնք տեղեկութուններ եյին հաղորդում և հետախուզում եյին
Փրանսիացիներին: Սակայն պարտիզանական կովի առաջնի հեռ-
չմիաձուլվող մի ուրիշ հոսանք էլ գոյություն ուներ—գյուղա-
ցիական հոսանքը: Ուրինակ, հայտնի յեն Մոսկվայի նահանգում
գյուղացի Դերասիմ Կուռինի ղեկավարությամբ գործող Ջոկատը,
վորի մեջ հաշվում եյին 5800-ից ավելի հետևակ ու հեծյալ մար-
տիկներ, և վորը Պավլով գյուղի մոտ զիմացավ կատարյալ ճա-
կատամարտի՝ Փրանսիացիների դեմ: Ստույլովի Ջոկատը, Կարու-
զայի նահանգի Կամենկա գյուղի գուղացիների Ջոկատը, շարքա-
յին գլինկոններ Չետովելիկովի ու Յերեմենկոյի հրամանատարու-
թյան ներքո գտնված Ջոկատները Սմոլենսկի նահանգում: Այդ-
պիսի կռիվը խիստ հարված էր հասցնում «յերկար ժամանակվա
ընթացքում մեծ զանգվածներով մղվող պատերազմի ծանրաշարժ

*) Պուշկին «Ռասարվիե»: Յերկերի ժողովածու, Վենդերովի հրատարա-
կությամբ, մաս 4-րդ, էջ 249.

**) Գլինկա «Սպայի նամակները», էջ 9: Հոբել, ժողովածու, հատոր 4
էջ 227:

սխառեմին», վորը հատուկ եր ցարական Ռուսաստանին, քանի վոր «նախահեղափոխական բանակաների դանդաղաշարժությունը հանգիստանում և ֆեոդալական իրավակարգի ճշգրիտ անգրագարձումը»^{*)}։ Գյուղացիական պատերազմը, մասնավորապես իր պարտիզանական ձևերում նախագուշակն եր այն հարցի, վորը պատմության կողմից հերթի յե դրվում՝ «բուրժուազիայի և մանր գյուղացիության սոցիալական ու քաղաքական ազատագրման»^{**)}։

Ահա թե վորտեղից և ժամանակակիցներին ապշեցնող ուսուսական բանակի տոկունությունը։ Բարոզինոյի դաշտում, յերբ 113 հազար մարդուց կազմված բանակը մեկ որվա ընթացքում կորցրեց 58 հազար մարդ, բայց վոչ մի քայլ չհանանջեց։ Ահա թե ինչու 533 հազար զինվորներից, վորոնց Նապոլեոնը մտցրել եր Ռուսաստան, հեռ վերադարձան միմիայն 18 հազար հոգի, այն ժամանակ յերբ 250 հազար զինվոր վոչնչացան կռիվներում, 50 հազար դասակարգեցին և 130 հազար մարդ ել ուսաների կողմից գերի ելին վերցված։ «Չարագործը Մոսկվայից դուրս ե քշված—գրել և մի ժամանակակից,—վոչ թե բանակի միջոցով, այլ մոսկովյան ու կալուգյան մորուքների կողմից»^{***)}։

Այսպես ջարդվեց Նապոլեոնը։

Արդեն սեպտեմբերի 9-ին նա, Մոսկվան գրավելով, Պետերբուրգ մեկնող աշտոնաթող կապիտան Յակովլևի միջոցով գիմեց Ալեքսանդր 1-ին հաշտության առաջարկով՝ «ժամանակն և մեզ հաշտվելու... Յես Ռուսաստանում անելիք չունեմ» գրում եր նա։

1789 թվականի բուրժուական հեղափոխությունը, ազատագրելով ֆրանսիական ժողովուրդը ֆեոդալիզմի և որսույնուտիզմի կապանքներից, նրա վրա դրեց նոր շղթաներ—կապիտալիզմի շղթաները։ Ռուսաստանի հեռ Նապոլեոնի մղած պատերազմի նպատակն եր անդամահատել Ռուսաստանը և այն ֆրանսիական

*) Կ. Մարքս և Գ. Ենգելս։ Յերկերի ժողովածու, հատոր 8, էջ 457-458։

**) Նույն տեղը։

***) Հորեկյանական ժողովածու, հատոր 4, էջ 288։

4-րդ 1802-1803 թվականներին Նապոլեոնը կի-
րառում էր Վեր դաթանությամբ չգերադանցված նվաճման և կե-
ղեքման քաղաքականություն, իր դադությամբ կողոպուտներով
ու սլատֆիչ արշավախմբերով հանդերձ*)։ Նա կամենում էր
ստանալ նաև ռուսական եթանագին հացը և, գլխավորը՝ փողային
ավար։ սրա համար նրան բոլորովին ել հարկավոր չէր ճորտա-
տիրական իրավունքը վերացնել։ «Գաղութների գյուղատնտեսու-
թյունը հարկադրված էր իր ղգալի մասով աշխատելու արտա-
հանման համար, սակայն դրանով գյուղացիական տնտեսությունը
յերբեք էլ չի ազատագրվում նրան հարստահարող նախակա-
պիտալիստական կապանքներից**») — մատնանշում էր Կոմիտեի
նի 6-րդ կոնգրեսը։ Բավական է ժտարեքել Նապոլեոնի կողմից
գաղութներում նեղրական ապստամբությունները ճնշելու արշու-
նոտ կողոպտյան, բավական է ճասել, որինսկի համար, վեր Նապո-
լեոնը 1802 թվականին Սան-Դոմինգոյում ու Դավադուպում
ստրկությունը վերականգնեց։

Նվաճված Ռուսաստանը հարկադրված պետք է լիներ զոհա-
բերել իր ինքնուրույն զարգացման շահերը և կատարել վասա-
լի դեր, հապիտալիստական Ֆրանսիայի կցորդի, վողջ աշխարհի
նկատմամբ նրա ընդարձակման ուժեղանալուն նպաստել։ «Այդ-
պես և արդեն շահագործողների որևէքը — հարվածել հետ մու-
ցածներին և թույլերին։ Կապիտալիզմի գալլի որևէքը***)։

Ցարիզմն ու ռուսական ազնվականները մեր յերկիրը յին-
թարկեցին բռնություն և դաժան շահագործման, ոտարեկրյա
նվաճողներն իրենց սվինների վրա բերում էյին նրան ոտարե-
կրյա լուծ և յերկտակ ճնշում։ «Մենք հպարտանում ենք նրա-
նով, վոր այդ բռնությունները գլխադրություն էյին առաջաց-
նում մեր միջավայրից, վելիկոռուսների միջավայրից, վոր այդ
միջավայրն առաջ քաշեց Ռադիչչեվին, դեկաբրիստներին, 70-ա-
կար թվականներին հեղափոխականներ — ռազնուչիեցիներին (տա-

*) Կոմիտեի 6-րդ կոնգրեսը։ Սղազրական հաշվետվություն։ Պրակ
4-րդ, Թեզիսներ, բանաձևեր, էջ 127, Գիդ. Մ. և Լ. 1929։

**) Կոմիտեի 6-րդ կոնգրեսը։ Սղազրական հաշվետվություն, պրակ
4-րդ, էջ 127։

***) Ստալին. «Տնտեսավարների խնդիրների մասին»։ «Լենինիզմի հար-
ցեր», էջ 445։ 10-րդ հրատարակություն (ռուսերեն)։

բաստիճան), վոր վերիկոռուական լտնվոր դասակարգը 1905 թվականին ստեղծեց մասսանների հեղափոխական հզոր կուսակցությունը, վոր վերիկոռուական մուծիկն սկսեց այդ թանակ դեմոկրատ դառնալ, սկսեց տերտերին ու կալվածատերու- ջը տապալել»*):

Մենք հպարտանում ենք նրանով, վոր սոցիալիստական Հոկտեմբերյան հեղափոխությունը, վորը զեկավարում եր բոլշև- վիկյան մեծ կուսակցությունը, ընդմիշտ ազատագրեց Ռուսաս- տանը գաղութի վերածվելու սպառնալիքից և նրան դարձրեց ազատ ու հզոր յերկիր, սոցիալիզմի անառիկ ամրոց:

«Բորբա կլասով» հունիս, 1936 թ.



*) Լենին, հատոր 18, էջ 81:

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032614

[094] 149

ԳԻՆԸ 50 Կ.

A $\frac{\pi}{32614}$